



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

23544

23545

323.1(47.925)

9-44

323.1 (97.925)

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԵՒ

Ի Տ Ա Լ Ի Ա

219256

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ.

28638 43
11778 - 57

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1879

ԱՌ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Քեզ կը ձօնեմ այս գրուած, որ կ'աւետէ Քո
յարուքիւն : Գեհեցի մէջ էիր Գու, այլ կոծգ կը
մեռնէր ծոցիդ մէջ. աչիդ լի էր արտօրով, այլ
սրկական դիմակն կը ծածկէր 'զայն աշխարհէն :
Եկաւ մի օր ուր ցունց տուիւր շղթայիդ, եւ աղա-
ղակդ յուզեց Եւրոպան : Կը շնորհաւորեմ առա-
ջին փայլդ խաւարէն յետոյ, առաջին փայլդ
դադարէն յետոյ :

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Նախորդ գրուածս , թե ինչ շահեցանք Պեր-
լինի Վեհաժողովեն , կը պարունակէր հետագայ
վերջաբանն .

« Բարձրաչնորհ Պատրիարքն , մի հայ պատ-
ուիրակութիւն յղելով Եւրոպա , կատարեց մի
գործ որ օգտակար եղաւ ազգին նիւթապէս եւ
բարոյապէս :

Պատմեցի արդէն մեր նիւթական օգուտ , 'զոր
մեզ կը մնայ արդիւնաւորել :

Գալով մեր բարոյական օգուտի , որ անհուն
եղաւ արդարեւ , մի ուրիշ հատոր պիտի պատմէ
'զայն :

Ա. յսօր կը սկսիմ կատարել խոստումս :

Ա. յդ հատոր պիտի բաղկանայ հինգ մասերէ ,
ոյց առաջինն է ներկայ տեսարակն :

Առաջին հայ պատուիրակութիւնն մի եզակի
երեւոյթ պիտի ստանայ մեր ազգի պատմական
կեանքին մէջ : Գա կարէւորագոյն դէպքն է
'զոր հայ կլիովն արձանագրած լինի դարերէ
ի վեր : Ա. յս մեծ դատի վկայներն պարտաւոր
են խօսիլ , եւ խօսիլ ճշմարտութիւնն : Պերճա-
չնորհ Տ. Խորէն Նար Պէյ պիտի պատմէ ան-
շուշտ այն գործեր 'զորս առանձին կատարեց
Ա. Բէգէրսպուրիկի մէջ եւ այլուր , եւ ես կը

փութամ աւանդել վկայութիւնս ապագային
առջեւ, պատմագրերով Պերճաշնորհ Տ. Մկրտիչ
Խրիսեանի գործերն, այց ահանատես եղած եմ:
Բարձրաշնորհ Տ. Ներսէս Վարժապետեան պիտի
ամբողջացունէ այս պատմութիւն, արձանագրե-
լով այն գործեր որք տեղի ունեցան Տաճկաս-
տանի մէջ, երբ հայ պատուիրակութիւնն ուտա-
նէ սատան կ'արշաւէր. եւ կան ուրիշ վկայներ
ալ, այց յայտնութիւններն կրնան յաւէտ կամ
նուազ լուսաբանել ազգային դատի մասնաւոր
պարագայներն:

Ընթերցողն պիտի տեսնէ թէ այս գրուած
եւ իւր յաջորդներ մի պարզ համարատուութիւն
չ'են: Չ'եմ գրեր 'զայնս իբր քարտուղար միայն,
այլ նաեւ իբր հայ ուղէւոր: Կը պատմեմ ուղէ-
ւորութիւնս, ոչ ազգային դատի տեսակետովն
միայն, այլ նաեւ ազգային տեսակետովն, Գի-
տեմ թէ Հայեր պիտի կարդան իմ գործեր,
ուստի պարտ կը համարեմ ինձ արձանագրել
ամեն բան, նշանուոր կամ աննշան, որ ազգիս
կը պատկանի: — Եւրոպա ներշնչեց 'զիս նաեւ
իբր մարդ եւ իբր քերթօղ. այլ դժբա անձնա-
կան տպաւորութիւններ են, որովք պիտի ձե-
ւանայ մի ուրիշ հատոր:

Ներկայ պատմագրութիւնն շատ մանրամասն
պիտի լինի: Գիտեմ թէ մի թերութիւն է դա,
մանաւանդ մի անձի համար որ դիւանագիտա-
կան պաշտօն վարած է: Սակայն, մեր ժողո-
վորդ մի բացառիկ վիճակի մէջ է. քաղաքական
կեանքի անընտել, նա կ'ուզէ լսել ամեն բան:

Պարզ սիրտերն չ'են կարօզ ըմբռնել թէ մութն
օգտակար լինի մերթ: Եւքա լոյս կը պահան-
ջեն, եւ, երբ լոյս չը գտնեն, կը կասկածին:
Պիտի ներեն ինձ նսքա սրբ գիտեն թէ կայ մեր
մէջ մի ընդդիմադիր կա՞նապէս թիւն, եւ թէ
սա, իւր անսանձ յարձակումներով, ճարակ
առաւ հանրային կասկածին:

Հանրային վիճակէն դուրս, հանրային ճաշակն
ալ հարկ կը դնէ իմ վրայ չը յատաւել մանրա-
մասնութիւններն: Մեր մէջ, յոյժ սակաւթիւ
են այնպիսի ընթերցողներ, որք մասնագիտու-
թիւն ունենան քաղաքական ճիւղին համար:
Շատեր կան որք տրամադիր են աւելի լուր
պահանջել քան հաշիւ, եւ որք աւելի հետա-
քրքիր են քան դատաւորք: Մի պարագայ, որ
երկրորդական կարէւորութիւն ունի մի ընթեր-
ցողի համար, էական կարէւորութիւն կը ստա-
նայ մի ուրիշ ընթերցողի համար: Մի գրագէտ,
որ ժողովուրդին կը խօսի, պարտաւոր է շրջա-
հայեաց լինիլ:

Այս դանաղան պատճառներ կը ստիպեն 'զիս
մանրապատում լինիլ: Մակայն, կը խոստովա-
նիմ թէ անհնար չ'է որ սխալիմ աստ եւ անդ,
թէ եւ ցանկամ եւ ճգնիմ անվրէպ հանդիսանալ:
Միակ տենչս է յիշել ամեն բան, այլ մարդ եմ,
եւ կրնամ մոռնալ: Մեր ուղէւորութիւն եղաւ
չոյս եւ լի: Ո՞վ կարօզ է պահպանել ամեն
տեսիլի յիշատակն, երբ կը սլանայ շողէկաւ քով:
Ո՞վ կարօզ է պահպանել ամեն սատղի սլա-
կերն, երբ մի համատարած ակնարկ կը ձգէ

կապոյտ կամարին վրայ : — Տեսանք անթիւ
դէմքեր եւ անթիւ դէպքեր . մարտ Տին մեկ-
նեցանք աստի, եւ այսօր, յանլար Տ, կը սկսիմ
սլատակել, յուշարար ունենալով ինձ ուղէւորա-
կան օրագիրս, մի կմախք ում պէտք է մարմին
տալ, եւ քսանվեց հակիրճ նամակներս առ
Բարձրաշնորհ Պատրիարքն :

Սակայն, կը փութամ յարել թէ, այս փա-
փուկ խնդիրի մէջ, բռնադատուած եմ մերթ-
լուութիւն սաշել եւ ստէս չամաւորութիւն :
Կը յուսամ թէ ամեն անաչառ ընթերցող իրա-
ւունք սխալի տայ ինձ, զի դիտէ թէ անհնար է
Տաճկաստանի մէջ խօսիլ եւ գրել այնպէս որ-
պէս կը խօսէինք եւ կը գրէինք մի աղատ աշ-
խարհի մէջ : Որպէս զի սլատակութիւնս ընդհատ
չը մնայ, պիտի յիշատակեմ ամեն բան, այլ
պիտի նշանակեմ այն կետեր ուր ընթերցողն
պիտի յաջորդէ հեղինակին, շեշտելով տկարն,
լայնելով համառօտն եւ դուշակելով բացակայն :
Կը հաւատամ թէ պիտի գայ մի օր ուր ամեն
ճշմարտութիւն կարենայ հռչակուիլ անվտանգ,
այլ դիտեմ թէ այդ օր չ'է այսօր :

Ընդդիմադիր կուսակցութիւնն, լսելով նոր
ձեռնարկս, պիտի հարցնէ ինձ . է՞ր այդքան
հոգ եւ ճիգ : Կը սլատակասանեմ թէ նսլատակ
ունիմ ծառայել աղգիս, հաղորդելով նմա այն-
պիտի ճշմարտութիւններ որք կրնան ոգէւորել
'զայն : Չ'եմ մտաբերեր արդարացունել 'զիս
ժողովուրդին առջեւ : Բարձրաշնորհ Պատրիարքն
ընտրեց եւ յղեց 'զիս Եւրոսլա, տալով ինձ

հրահանգները՝ զորս գործադրեցի կետ առ կետ, զի հաշտ էին ազգային օգուտին հետ եւ հետեւապէս խիղճիս հետ: Նա, որ պաշտօնի կոչեց զիս, անձնապէս եւ պաշտօնապէս յայտնեց ինձ իւր գոհութիւն. ապա, յուլիս ՉԱին, ամբողջ ազգին առջեւ, զոր իւր երեւոյթիւններ կը ներկայացունէին, տուաւ ինձ համար մի յոյժ պատուաբեր վկայութիւն, զոր սակայն յոյժ ծայրայեղ կը գտնէ զխտակցութիւնս: Դա կը յայտնէ թէ պէտք է ունիմ արդարացունել զիս այսուհետեւ: Նսքա, որք պաշտօն չը յանձնեցին ինձ, ազատ են ներբողել կամ պախարակել այն գործեր զորս պիտի պատմեմ, որպէս ազատ եմ եւ կարէւորութիւն չը տալ նոցա գովեստի կամ պարսաւի:

Ս. յս յայտարարութիւններէ յետոյ, ընթերցողն կրնայ հարցնել ինձ, Միթէ անխանկ եզուհայ պատուիրակութիւնն, միթէ չը գործուեցան թերութիւններ: Իբր անկեղծ Հայ, կը պատասխանեմ թէ տեղի ունեցան թերութիւններ, զորս անօգուտ է նշանակել աստ եւ զորս Բարձրաշնորհ Պատրիարքին հաղորդած եմ ընդհանրապէս: Որպէս զի անիրաւ կասկածներ չը ծագին, կը փութամ յարել թէ այդ թերութիւններ ներքին էին եւ թէ օտար մատ չը կար բնաւ նոցա մէջ:

Ս. յԺմ, կ'անցնիմ ուրուագրել այն բարոյական օգուտ զոր առաջին հայ պատուիրակութիւնն ընձեռեց ազգին:

Երբ գնացինք Երոսպա, տեսանք, ոչ առանց

մտրմութի, թէ հայութիւնն անձանօթ մնացած է նմա բոլորովին :

Գիտէինք արդէն թէ Եւրոպացին չ'էր կարող իւր սրտմահան ուսումներէ լոյս առնուլ մեր վրայ, որպէս կ'առնու Յոյնին վրայ, զի եւրոպացի տառամիջներն չ'են աւանդեր մեր ազգի սրտմութիւնն եւ գրէթէ չ'են յիշատակեր հայ անունն : Այլ կը յուռայինք թէ Մխիթարեաններն եւ ուրիշ հայ կամ հայագէտ հրատարակիչներ ծաւալած լինէին տեղեկութիւններ Արարատի հին ժողովուրդին վրայ, եւ բնաւ չ'էինք երեւակայեր թէ, երբ հայ անունն արտասանէինք, Եւրոպա մեզ պիտի նայէր ապուշ աչքերով եւ պիտի ճգնէր գուշակել թէ ուր էր մեր հայրենիք, հին աշխարհին մէջ թէ նորին : Մի դառն փորձառութիւն դուժեց մեզ թէ կը սխալէինք . համոզուեցանք թէ այդ հեղինակներ աշխատած էին մասնադէտին համար միայն, որ մի աննշան փոքրամասնութիւն կը ձեւացունէ ամեն ազգի մէջ : Ժողովուրդն անտարբեր մնացած էր մի ցեղի առջեւ ոյր գոյութիւնն իսկ անձանօթ էր նմա :

Պիտի առարկեն ինձ թէ, հոգէլոյս վիզդօս Լանկլօաթի պէս, կան անշուշտ եւրոպացի հայագէտներ որք կը մշակեն եւ կը տարածեն մեր լեզու եւ մեր գրականութիւն, սրովք օտարներն գաղափար կը ստանան մեր վրայ : կը սրտասխանեմ թէ հայագէտ չը տեսանք բնաւ Եւրոպաի մէջ, եւ չը լսեցինք թէ կան անձեր որք հմուտ են մեր լեզուի : Ո՛րք են այն հայա-

գէտներ որովք կարենան սանձալ Իտալիա, Անկլիա, Ալեմանիա, Աւստրիա եւ ուրիշ երկիրներ, որք կը սանձան յունագէտներով: Գիտէի թէ Ֆրանսա ունէր մի հայագէտ, Պ. Էտուառ Տիւլօռիէ, զոր ցանկացի տեսնել երբ Բարիլի մէջ էի. երեք անգամ դնացի այն դպրոց ուր նա կը դասախօսէ, եւ չը կրցայ պատահիլ նմա. Խրիստեանի այցաքարտին հետ յղեցի նմա իմ այցաքարտ, ում պատասխանեց: Սակայն, մի անձէ, որ ունկնդիր եղած էր Պ. Տիւլօռիէի դասին, ստուգեցի թէ ազնիւ բանասէրն երկու Ֆրանսացի աշակերտ միայն ունէր, մին ծեր եւ միւսն երիտասարդ. ծերն կը մտափէր ընդհանրապէս, եւ հաւանապէս չը սլտի կարենայ սուարտել հայ լեզուի ուսումն, իսկ երիտասարդն կ'երազէր, դուցէ Էրզրումի հիւպատոսութիւնն: Կը յուսայինք թէ ուղէւորութիւնն Եւրոպացիին ծանօթացուցած լինէր հայութիւնն: Անձնակրան փորձառութիւնն յայտնեց մեզ թէ կը սխալէինք չարաչար: Յոյժ սակաւաթիւ են այն եւրոպացի ուղէւորներ որք շրջած լինին Հայաստանի մէջ. նոքա տեսած են սովորապէս կոստանդնուպօլիսն եւ ուրիշ մարդաշատ կեդրոններ, ուր անցորդին համար դժար է որոշել Հայն օտարէն, զի ինչ տարբերութիւն ունիմք Թուրքէն, Յոյնէն կամ ուրիշէն, քանի որ կորցուցած եմք մեր ազգային յատկանիշներ եւ օտարի կապիկն եղած եմք ամենուրեք: Գալով հայ ուղէւորին, որ կը շրջի եւրոպական աշխարհին մէջ, նա գրէի՞թէ բնաւ չ'է ունեցած ազգային

նալատակ, շահիլ կամ գրօսնուլ փափաղած է նա
ընդհանրապէս, կան աղնիւ բացառութիւններ,
'զորս գիտեմ յարգել, այլ ընդհանուր կանոն է
սլանդութատ Հային համար կեղծել իւր ազգու-
թիւն եւ ամեն ճիգ թափել որպէս զի նմանի
օտարին, իբր թէ եւրոպական ստիկանութիւնն
ոճիր նկատած լինէր հայութիւնն: Շատ բնա-
կան է դա մի ժողովուրդի համար որ կը սիրէ
օտարանալ իւր յատուկ հայրենիքի մէջ խակ:

Զարմանալի բան, այս օտարացում ազգած է
ամեն բանի վրայ, մինչեւ հայ կրօնին վրայ, որ
այնքան սլահականօղական է սակայն: Մանչէս-
դըրի հայ եկեղեցին մի բրիտանական եկեղեցի
է, նխթապէս եւ գուցէ բարոյապէս, թէ եւ
սլարդ, սիրուն եւ կանօնաւար: Նա Օքսֆորտ
ուղիի Գլարէնս փողոցին մէջ կը բարձրանայ իւր
տժգոյն սրմերով եւ եռանկիւն ճակատով, եւ
Սլալիօնի բարէպաշտ որդին, որ կ'անցնի անտի,
կը նշմարէ թիւ 55 շէնքն եւ կ'ասէ. Փնաք
Ստեղծօղին, այս փողոցի մէջ ալ ունիմք եկե-
ղեցի: — Երբ Խրիմեանի հետ Մանչէսդըր գնա-
ցի, հայ վաճառականներն եկան դիմաւորել ըզ
մեզ, նոքա որք հայ սիրտ կը կրեն եւրոպական
տարազին տակ. անջատուեցաւ մին ի նոցանէ,
եւ, մտնելով մեր շոգէկառքի մէջ, ողջոյն տուաւ
նախակին սլատրիարքին. ոչինչ կը տարբերէր
'զայն իւր ընկերներէ. քաղաքային համազգեստ
կը կրէր նա եւ գլանածեւ գլխարկ: Խրիմեան,
ինձ դառնալով, ասեց. « Մի կարծեր թէ սա
ալ մի վաճառական լինի. Մանչէսդըրի առաջ-

նորդ վարդապետն է սա : » Չ'էի ճանաչեր Հոգէչնորհ Տ. Ղեւոնդ Փիրղալէմեանն, որ ապամի բարի եկեղեցական թուեցաւ ինձ . այլ կը խոստովանիմ թէ տխուր խոհեր պաշարեցին 'զիս երբ, յաջորդ օրն, նոյն քաղաքի մի փողոցին մէջ, պատահեցայ մի յոյն վարդապետի որ կը կրէր իւր ազգային համազգեստ, արեւելեան լայն վերարկուն եւ բարձրադէտ փակեղն : Նոյն տեսիլն ներկայացաւ ինձ Լօնտօնի մէջ ալ, ուր յոյն վարդապետներն իւրեանց համազգեստով կը ճեմեն խրոխտապանծ : — Երբ վիէննա հասանք, հայ վաճառականներն եկան տեսակցիլ մեզ հետ . կ'ընկերանար նոցա մի անձ, որ եւրոպական տարազ կը կրէր հանրապետական գլխարկով, այս կայտառ եւ համակիր երխտասարդ մի վարդապետ էր, Հոգէչնորհ Տ. Եղեկիէլ Արապեանն : Քաղաքն ունէր յոյն եկեղեցիներ եւ վարդապետներ, որք էին որպէս են աստ եւ այլուր :

Այս զանազան պատճառներով, հայութիւնն անձանօթ էր Եւրոպայի, երբ հայ պատուիրակութիւնն հասաւ անդ : Բոլոր ընկերական դասերն, վերին կամ ստորին, անտեղեակ էին մեր վիճակի : Ամենուրեք կը տիրէր մի թանձր տղիտութիւն հայ ազգին նկատմամբ : — Թող ներուր ինձ յիշատակել աստ մի քանի օրինակներ միայն :

Բարիզի մէջ էինք . կը բնակէինք Օդէո s'Օռիան պանդոկին մէջ, ուր Խրիմեան կը կրէր իւր համազգեստ : Պանդոկապետն, հետաքրքիր,

հարցաւ ինձ մի օր թէ ինչ ազգէ էինք. — Առ-
ւեկնիկն (Հայ), պատասխանեցի : — Աւեկնիկն,
յարեց նա մտախոհ . վառ վառիկ տիւ Աւեկնիկն
(Ամերիկացի ասել կ'ուզէք) : — Բա զԱւեկնիկն
(ոչ Ամերիկացի), պատասխանեցի, մե զԱռ-ւե-
կնիկն (այլ Հայ) : — Առւեկնիկն (Հայ), յարեց
Արեւելեան պանդոկի պանդոկապետն, ժը ն'ան
սե ուիկն (չը գիտեմ) :

Վիէննայի մէջ, տեսակցեցայ մի տեղացի
թղթակիցի հետ, 'զոր յորդորեցի մի յօդուած
գրել ազգային դատին նկատմամբ : Զանազան
տեղեկութիւններ խնդրեց յինէն Հայ ժողովուր-
դին վրայ, եւ արձանագրեց պատասխաններս :
Ապա հարցաւ ինձ. Ի ն-դ-իլ իւն շանկ առւե-
կնիկն (միթէ Հայերն ունին յատուկ լեզու) :
Այս հարց կ'ուղղուէր ինձ քիչ հետի Մխիթար-
եան վանքէն :

Մանչէսթըրի մէջ, ներկայացուցին 'զիս մի
խմբագիրի, յայտնելով նմա թէ Հայ էի : «Թո՛ւրք
Հայ թէ յոյն Հայ,» հարցաւ նա . — Արեւիկիւն
բրիտանացի (քրիստոնեայ Հայ), պատասխանեցի,
յիշելով թէ Հայ բառն չ'ունի Եւրոպայի մէջ այն
խմաստ 'զոր ունի մեր մէջ : Եւրոպացին Հայաս-
տանցի կ'ըմբռնէ 'զայն, աշխարհագրական նշա-
նակութիւն ընծայելով մի բառի ում ազգային
նշանակութիւն կ'ընծայեմք : Նա կը կարծէ թէ,
որպէս Հայաստանի քրիստոնեայն Հայ է, մահ-
մետականն ալ Հայ է, հրեայն ալ :

Պէրլինի մէջ, ամեն դիւանագիտական երե-
կոյթի համար յատուկ հրաւիրագիր կը ստա-

նայի դեպքաններէն, որպէս կը ստանային նաեւ
Խրիմեան եւ Նար Պէյ : Անդ կը հաւաքուէր
եւրոպական ազնուապետութիւնն, արիւնի կամ
տաղանտի ազնուապետութիւնն, չը խտրելով
սեռ եւ հասակ : Երբ պատահէր ինձ մտերմա-
նալ մի երիտասարդ կոչնականի հետ, որ լսէր
թէ հայրենիքս Տաճկաստանի մէջ էր եւ թէ
Հայ էի ես, միամիտ Եւրոպացին, չը կարենալով
սանձել իւր հետաքրքրութիւն, կը հարցնէր ինձ
անլրէպ . « Քանի կին ունիք արդեօք, » զի կը
կարծէր թէ մահմետական էի :

Կօնսօնի մէջ, Պ. Լինչ, Պաղտատի նախկին
բրիտանական հիւպատոսն, մի հացկերոյթ տուաւ
մի օր, ում հրաւիրեց Տարօնի արքեպիսկոպոսն,
Պ. Սէթ Արզարն եւ 'զիս : Արեւմտեան քաղա-
քավարութիւնն կը սրահանջէ սր ամեն այր, թեւ
տալով մի կինի, առաջնորդէ 'զայն խօսարանէ
ճաշարան, ուր բազմի նորա քով, ծառայէ եւ
խօսակից լինի նմա : Տանտէրն նշանակեց ինձ
մի աթոռ Տիկին Լինչի քով, որ մի ազնիւ
հայուհի է, եւ ընկերուհի որոշեց ինձ Օրիորդ
Շուլց ալէմանուհին, գուցէ ազգական այն զի-
տուն Շուլցի որ Քուրդերէն սպանուեցաւ երբ
գրադած էր կարգալ Վանի սեպագիրներն : Ըն-
կերուհիս, որ, իւր մայրենի լեզուէ զատ, գիտէր
Ֆրանսերէն, անկլերէն եւ իտալերէն, առած
էր մի ընտիր դաստիարակութիւն : Սեղանի վրայ
էինք, եւ հարկ չ'էր ասել թէ կերակուրներն
եւրոպական էին : « Տաճկաստանի մէջ ունիք
այսպիսի կերակուրներ, հարցաւ ինձ Օ. Շուլց :

— Ստոյգ է թէ ամեն երկիր իւր կլիմայի յարմար կերակուրներ ունի, սլատասխանեցի, այլ եւրոպական կերակուրներն բաւական տարածուած են այժմ Տաճկաստանի մէջ : — Կը հաւատամ թէ ունիք այս կերակուրներ, յարեց նա, այլ չ'ունիք այս սեղան : — Ի՞նչ կ'ուզէք ասել, օրիորդ : — Կ'ուզեմ ասել թէ, ձեր մէջ, այր եւ կին այսպէս խառն չ'են բազմիր սեղանին շուրջ . անձնիւր սեռ առանձին կը ճաշէ : » Հէգ աղջիկ գիտէր թէ Հայ էի, այլ չը գիտէր թէ Հայնք ըրիստոնեայ է :

Նոյն ոստանին մէջ, երբ մի ականաւոր ընկերու թիւն, Տի ապօրինիներս՝ քօղեզըն սօսայեղի, ոյր նպատակն է եւրոպացի դաղթականին դէմ սլաշտպանել նոր կամ հին աշխարհի տեղացիներն, գումարեց իւր տարէկան ժողով, ասենապետն, Պ. Ֆրայ, հրաւիրեց ըզ մեզ մի ակումբի ուր Անկլիա ունէր հարիւրաւոր ներկայացուցիչներ, այր եւ կին : Պ. Գարեգին Բարազեան, մի Հայ որ կը բնակէր Լօնտօնի մէջ, ընկերացաւ մեզ : Ընկերութիւնն ունէր, լուսամիտ եւ սերճախօս անդամներ, որք ընտիր ճառեր կարդացին եւ խօսեցան . նոքա ազնիւ ասացուածներով եւ զգայուն հոգիով սլաշտպանեցին դերին ազատին դէմ, տկարն հզօրին դէմ, արդարն անիրաւին դէմ : Յանկարծ, մի անգամ ելաւ եւ սապէս խօսեցաւ . « Կը լսեմ թէ Հայ է այն եկեղեցական ոյր ներկայութիւնն սլատիւ կը բերէ այսօր մեր ակումբի : Հարիւրաւոր անձեր կան աստ, այլ ոչ ոք գիտէ թէ Հայն ինչ է .

սակայն կը ցանկամք տեղեկանալ Հայաստանի
անցեալին եւ ներկային: Միթէ Պերճաշնորհ
արքեպիսկոպոսն կը հաճի ծանօթացունել մեզ
իւր ազգի կրօնն, լեզուն, պատմութիւնն եւ
արդի վիճակն. նաեւ, ցանկալի է մեզ լսել թէ
հայ պատուիրակութիւնն ինչ կը խնդրէ Եւրո-
պայէն: Շատ գոհ պիտի լինիմք երբ այս տեղե-
կութիւններ հաղորդուին մեզ:» Խրիմեան եւ
իւր թարգման կատարեցին իւրեանց պաշտօն:

Տրէստի մէջ, որ Սաքսի ոստանն է եւ ուր
հասանք երկու հայ ուղէկիցներով, դուրս ելայ
չոգէկառքէն, ինձ հետ ունենալով Մշակի մի
քանի թիւերն, 'դորս տուած էր ինձ Պ. Անդ-
րէաս Արծրունի, եղբայր նոյն թերթի խմբա-
գրապետին, որ հանքաբանութիւն կը դասա-
խօսէ Պէրլինի համալսարանին մէջ: Թերթերէն
մին անկաւ ձեռքէս, եւ հոմն մղեց 'զայն մինչեւ
մի մօտակայ կառախումբ: Մի կառասպան իջաւ
իւր բազմոցէ, առաւ լրագիրն, բացաւ 'զայն,
դիտեց նշանագիրներն եւ բարձրաձայն կոչեց
իւր ընկերներ, որք խկոյն մի շրջանակ կազմե-
ցին իւր շուրջ: Անցորդներն, տեսնելով այս հա-
ւաքում, եկան խոնուիլ անդ, եւ ես ալ, իբր
հետաքրքիր, խառնուեցայ նոցա մէջ, ուղեւով
լսել թէ ինչ պիտի վճռէին հայ թերթին նկատ-
մամբ: Կառասպանն պարզած էր Մշակի երկու
թուղթերն եւ գլխիվայր բռնած էր 'զայն. ամ-
բոխն անյազ աչքերով կը դիտէր 'զայն: «Ո՞ր
լեզուի կը պատկանին արդեօք այս նշանագիր-
ներ, կը հարցնէին իրարի: — Յուներէն է, պա-

տասխանեց մի անցորդ : — Ոչ , յարեց մի ուրիշ , ես գիտեմ յուներէն . յոյն տառեր չ'են սորա : — Գուցէ եբրայական լինին , յարեց հետաքրքիրներէն մին : — Ոչ , գոչեց մի անցորդ . ես Իսրայէլացի եմ , եւ կը ճանաչեմ եբրայական տառերն : — Ուրեմն չիներէն է , յարեց մի կառատօյան : — Չինական նշանագիրներն շատ տարբեր են ի սոցանէ , պատասխանեց մի Ալէման : » Մի անցորդ դիտել տուաւ թէ գլխովայր բռնուած էր լրագիրն , առարկելով թէ այն չորս մեծ նշանագիրներ (ՄՇԱԿ) , որք կը նշմարուէին թերթին տակ , թերթի տխտղոսն էին անշուշտ : « Իրաւունք ունիք , յարեց մի ուրիշ անցորդ . աւելի հզօր ապացոյց են թուանշաններն , որք ահա տարբեր չ'են մեր թուանշաններէ եւ որք , արդի դիրքին մէջ , գլխովայր են : » Կառատօյանն ուղղեց Մշակի դիրքն . սակայն , տեսնելով թէ ոչ ոք կը ճանաչէր այն տարօրինակ տառեր , ծալեց թերթն հանդիսապէս , գետեղեց 'զայն իւր գրտանի մէջ , եւ , ժողովուրդին դառնալով , գոչեց . « Կը տեսնեմ թէ մեր գործ չ'է ճանաչել այս լեզու : Ես ճեմարանի տեսուչին սխտի տանիմ լրագիրն . գուցէ նա լուծում տայ հանելուկին : » Եւ ցրուեցաւ ամբոխն :

Որպէս զի չ'առարկուի թէ նախորդ օրինակներն ընկերական ստորին խաւերէն քաղուած են , կը փութամ յաւելել հետագայ օրինակներն :

Հռոմի մէջ , երբ արտաքին նախարար Կոմս Գօռդի տեղեկացաւ թէ Հայերն վարչական ինքն-

օրինութիւն կը պահանջեն, հարցաւ մեզ . « Եւրոպական թէ ասիական Տաճկաստանի մէջ : » Այս հարց կ'ուզուէր մի անձէ որ դեռ պահ եղած էր օսմանեան ուստանին մէջ :

Հօնտօնի մէջ, ներկայացանք Սօլզպէրիի : Պ. Կարապետ Յակոբեան, մի Հայ որ կը բնակէր անդ, եւ Պ. Գ. Բարազեան կ'ընկերանային մեզ : Յայտնեցի նախարարին թէ Խրիմեան օսմանեան Հայաստանի պատուիրակն էր, որ կը գար պաշտպանել Հայ ժողովուրդի իրաւունքներն : Խրիմեան սկսեցաւ խօսիլ Հայերէն, եւ ես կը փութայի թարգմանի պաշտօնս կատարել Քուանտական լեզուով : Մի քանի անգամ խօս ասաւ նախկին պատրիարքն, Հայ ազգի դանդատներն եւ պահանջներն արտայայտելով բրիտանական նախարարին, եւ ասպա հրաժեշտ տուաւ նմա : Սօլզպէրի կոչեց 'զիս իւր քով եւ հարցաւ թէ ինչ լեզուով կը խօսէր Հայ պատուիրակն :

Ահա երկու մեծ մարդեր, որք երկու մեծ ազգեր կը վարեն քաղաքական ասպարէզին մէջ : Մին որոշ գաղափար չունի Հայ ազգի հայրենիքին վրայ, միւսն Հայ ազգի լեզուին վրայ :

Ուրեմն, արդար է կրկնել թէ, երբ Հայ պատուիրակութիւնն Եւրոպա հասաւ, ժողովուրդներն եւ կառավարութիւններն հաւատարատէս անտեղեակ դասաւ մեր ազգի վիճակին :

Ի՞նչ օգուտ կրնայ քաղել Եւրոպա ճանաչելով ըզ մեզ : Մեզ անկ է գաղափար տալ նմա մի ժողովուրդի վրայ ում կրնայ օգտակար լինիլ, զի Եւրոպա չէ կարող փրկել մի ազգ որ ան-

ծանօթ է նմա, որպէս մի սեղանաւոր չ'է
կարող մեծ գումարներ վստահիլ մի անծանօթ
անհատի : Ահա մի սրարտ 'զոր զանց առած էինք
կատարել ց'արդ :

Հայ պատուիրակութիւնն ձեռնարկեց կատա-
րել այս կարէւոր դեր : Նա հայութիւն քարո-
սեց եւրոպական աշխարհին մէջ, եւ տաճարներ,
պալատներ, ապարաններ, պաշտօնատուներ,
դեսպանատուներ, ժողովարաններ եւ տպա-
րաններ արձագանգ տուին իւր ձայնի : Ամեն
սեռէ, ամեն հասակէ եւ ամեն աստիճանէ Եւ-
րոպացիներ Հայ տեսան եւ Հայ լսեցին : Հայ
խնդիրն, մարմին առած, շրջեցաւ ամենուրեք :
Անծանօթն շօշափելի եղաւ, անանունն պատ-
կառելի :

Ժողովուրդներն, յուզուած, սկսեցան ձայն
բարձրացունել պաշտօնական միջոցներով . բրի-
տանական խորհրդարանն իւր օրակարգի մէջ
անցուց Հայ խնդիրն, եւ Գայնըսի պէս մի օրա-
գիր Հայ դատին նկատմամբ երեք յօդուած հրա-
տարակեց իւր մի թերթի մէջ : Կառավարու-
թիւններն մեծարեցին Հայ պատուիրակութիւնն
եւ համակիր զգացումներով ընդունեցան մի
ազգ որ կը գար ողջունել եւրոպական դահերն
իւր անդրանիկ ողջոյնով :

Ա, յո, Եւրոպա սիրեց եւ յարգեց հայութիւնն :
Երբ Հայ պատուիրակութիւնն տեղեկութիւն
տուաւ նմա Հայաստանի վրայ, հրճուեցաւ նա,
որպէս երբ Գօլօմպ ոտք կոխեց նոր աշխարհի
եզրին վրայ : Երբ Հայ պատուիրակութիւնն տե-

դեկութիւն տուաւ նմա հայ ազգին վրայ, հրճ-
ուեցաւ նա, որպէս մի մարդ որ մի նոր արուեստ
կը գտնէ :

Հայ պատուիրակութիւնն ընտիր յիշատակներ
թողաւ ամենուրեք ուր թափանցեց : Նոքա, որք
տեսան 'զայն, պիտի յիշեն 'զայն երկար, եւ
նոքա, որք լսեցին 'զայն, չը պիտի մոռնան 'զայն
երբէք : Նա շատ սերմեր ցանեց Արեւմուտքի
մէջ, որք մի օր պտուղ պիտի տան մեզ Արե-
ւելքի մէջ :

Նոքա, որք պիտի կարդան այն պատմութիւն
'զոր այսօր կը սկսիմ շարագրել, պիտի դատեն
թէ որքան իրաւունք ունէի երբ կը գրէի թէ
հայ պատուիրակութիւնն ընծայեց ազգին մի
բարոյական օգուտ որ անհուն եղաւ, ազնիւ
գոյներով պատկերելով 'զայն օտարին առջեւ :

Այս պատմութիւն անծանօթ է ազգին : Ոչ
ոք գիտէ թէ ինչ գործած է հայ պատուիրա-
կութիւնն, երբ պանդուխտ էր եւրոպական աշ-
խարհին մէջ : Հայ մամուլն հրատարակած է
ցանցառ տեղեկութիւններ միայն, որք միշտ
թերի են եւ ստէպ թիւր կամ ստայօդ, զի չը
կար մեզ հետ մի թղթակից որ տեղեկագրէր
նմա ամեն բան, Հռովն, Բարիզն, Լօնտօնէն,
Պէրլինէն, Վիէննաէն եւ ուրիշ քաղաքներէ :

Այս անստուգութիւն ծնած է զամաղան կոտ-
կածներ, որք ձկտած են խզել ազգային ներ-
դաշնակութիւնն : Երբ լոյս ծաւալուի համա-
տարած, ես կը հաւատամ թէ ամեն ճշմարիտ
Հայ դո՛հ պիտի լինի Ներսէս Վարժապետեանի

Ճեռնարկէն, ընդդիմադիր կուսակցութիւնն պիտի յօժարի հրաժարիլ իւր զէնքերէ, եւ խղճահար պիտի լինին նոքա որք դատապարտեցին : Միայն վասակներն անդիղջ պիտի մնան, զի կ'ուզեն անդիղջ մնալ : այլ վարդանի սերունդն սպառած չ'է ազգին մէջ :

Հայ ժողովուրդին առջեւ ճշմարտութիւնն հռչակելով ազգային դատին նկատմամբ, մի նսրատակ միայն ունիմ. Հաշտեցունել ճշմարիտ Հայերն եւ ազգաշէն գործի յորդորել 'զայնա :

Բաւ են այն ազգասպան վէճեր որովք, երկար ամերէ ի վեր, սպառեցինք մեր ժամանակ եւ մեր կորով : Թող սէր յաջորդէ ներքին սրտերազմին, եւ մեր ազգ ջանայ օգտիլ այն նոր դիրքէ 'զոր Եւրոպայի առջեւ ստացան Հայաստան եւ հայութիւն :

Յոյս չը դնեմք օտարին վրայ : Որպէս նա իւր շահ միայն կը մտածէ, մեք ալ սրաշտպանեմք մեր շահեր եւ սրասրաստեմք մեր ապագայ :

Հայ եմք, եւ Հայ մնամք : Պէրլինի վեհաժողովէն յետոյ, անհնար է թերահաւատ լինիլ ազգային ապագային նկատմամբ :

Հայութիւնն պիտի փրկուի, երբ իւր զաւակներ միանան եւ գործեն :

Հասցիւղ, 8 յանվար 1879.

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ե Ի

Ի Տ Ա Լ Ի Ա

Տ ՄԱՐՏ 1878.

Մարտ 6ին, Բարձրաշնորհ Պատրիարքն յայտնեց ինձ թէ, յաջորդ օրն իսկ, Խրիմեան պիտի երթար Եւրոպա իբր ազգային պատուիրակ, եւ խնդրեց որ ընկերանամ նմա իբր թարգման եւ իբր քարտուղար: Պաշտօնն էր ձրի, տաժան եւ գուցէ ոչ անվտանգ. շատեր մերժած էին՝ զայն: Ընդունեցայ, թէեւ տկար:

Երէկ, Խրիմեանի հետ մտայ մի շոգէնաւի մէջ որ պիտի երթար Օտէսա: Նաւապետն յայտարարեց թէ ռուս կառավարութիւնն հանած է մի նոր հրովարտակ, որով կ'արգելէ կղերական փոխադրել Տաճկաստանէն Եւրոպա, եւ հրաւիրեց ըզ մեզ դուրս ելնել շոգէնաւէն, որ իսկոյն պիտի մեկնէր: Մերժեցինք անսալ այդ հրամանի, այլ նաւապետն յայտնեց թէ կրնայ տանիլ ըզ մեզ մինչեւ Օտէսա եւ, դուրս չը հանելով ըզ մեզ իւր շոգէնաւէ, վերադարձունել կոստանդնուպօլիս: Ստիպուեցանք տեղի տալ, եւ

հրաժեշտ տուինք հիւրատեաց Եւքսինեան Պոնտասի : Հիներն չարագուշակ սլիտի նկատէին այս առաջին ձախողանք . մեք զարմանք միայն զգացինք :

Այսօր, մեկնեցանք Մեսիդեոռասնեո (Միջերկրական) անուն շոգէնաւովն, 'զոր կը գործածէ մի խապեան ընկերութիւն եւ որ սլիտի երթայ Պոնտասիզի :

Բարձրաստիճան ուղէկիցս ունի մի անցազիր որ Մկրսիչ եփեկնի կ'անուանէ 'զայն եւ կը յայտնէ թէ նա Ասիա կ'երթայ : Իմ անցազիր Գրիգորեան կը կոչէ 'զիս եւ կը յայտնէ թէ Յժ տարէկան եմ եւ կ'երթամ Օտէսա առեւտրական գործի համար. . . :

Գրսլանիս մէջ եւ արկղիս մէջ ունիմ թուղթեր որք շատ անմեղ չ'են . . . : Մաքսատունի Արգոսներն կը սրբալենն ամեն բան . սիրտս կը դողայ իբր տերեւ , աւելի ազգիս համար քան անձիս , այլ Հայաստանի Աստուածն կը փակէ լրտես աչքերն :

Մնաս բարեաւ , կոստանդնուպոլիս : Առաջին անգամ է որ կը հեռանամ ի քէն , եւ կը խորասուզիմ անձանօթին մէջ : Ազգիս աղէտներն առաջնորդ են ինձ , եւ կ'երթամ :

9 ՄԱՐՏ .

Մեսիդեոռասնեո կը մօտի Դարդանէլի :

Յայտնեցին մեզ թէ անհնար չ'է որ, երբ մեր երթի համբաւն տարածուի Բիւզանդիոնի մէջ ,

մի հեռագիր կասեցունէ ըզմեզ այդ նեղուցի մէջ . . . : Երկիւղն փարատուեցաւ անվտանգ :

Գ մարտ . այս թուական ահ կ'ազդէ մեզ , զի մրրկածին հռչակուած է Արեւելքի մէջ : Թուրքերն կ'ասեն . Մարտ sofnuqnu գուրքունասար (Գ մարտի փոթորիկ) :

Արդարեւ , կոհակներն կը սկսին ծեծել մեր նաւ : Ծովախառն կը գամէ 'զիս անկողինիս մէջ :

10 ՄԱՐՏ .

Հասանք Սիրաի առջեւ :

Մեքիդեոռանեո կը շարունակէ իւր ուղի , եւ ես կը ձեռնարկեմ Խրիմեանի համար գրաւորապէս թարգմանել այն յիշատակագիր 'զոր պիտի հաղորդէ եւրոպական դահլիճներին եւ որ խմբագրուած է ֆրանսական լեզուով :

11 ՄԱՐՏ .

Կը շարունակեմ եւ կ'աւարտեմ թարգմանութիւնս , հակառակ ծովին որ կը սպառնայ :

Ուղէկից է մեզ մի երիտասարդ Ալէման , ում կը նկարագրեմ ազգիս վիշտերն : Հայասէր է նա , եւ կը խրատէ 'զիս դիմել Պիամարքի եւ պաշտպանութիւն հայցել Հայաստանի համար . չը գիտէ մեր պաշտօն . . . :

Ծովն կը սկսի տանջել ըզմեզ :

12 ՄԱՐՏ .

Կատաղի արէկոծանք :

Հասանք Պոլինտիդի , ուստի Հռոմ պիտի եր-

Թամք շողէկառքով : Մեկնած է երկաթուղիի
յետին կառախումբն . պէտք է դիշերն անցունել
Պռինտիզի մէջ :

Կռանիս արպեռիօ սեղի Ինսիս Օռիկեդարի
(Մեծ պանդոկ Արեւելեան Հնդկաստանի) . այս-
պէս կը կոչուի այն պանդոկ ուր դադար առինք :

13 ՄԱՐՏ .

Առաւօտ է , եւ կ'առնումք մի թեթեւ նա-
խածաչ :

Սեղանի վրայ , կը ծառայէ մեզ մի իտալեան
պատանեակ , որ հետաքրքիր աչքերով կը դիտէ
Խրիմեանն : Տեսած է նա շատ օտարներ , աչ-
խարհի հինգ մասերէն եկած . այլ առաջին ան-
գամ է որ կը տեսնէ մի հայ կրօնաւոր իւր
յատուկ համազգեստով : Իտալեանն , չը կարե-
նալով խեղդել իւր հետաքրքրութիւն , վերջա-
պէս համարձակեցաւ անխօս ուղէկիցիա վրայ
տեղեկութիւն խնդրել յինէն ցած ձայնով եւ
քաղաքավար ձեւերով : « Արքեպիսկոպոս է ,
պատասխանեցի իտալերէն , եւ Ասիացի : — Կը
մաղթեմ որ , յարեց նա բարձրացունելով իւր
ձայն , կարդինալ լինի մի օր , եւ մի օր ալ սրապ : »
Պասպական պատանեակի իղձերն հազորդեցի
Խրիմեանի , որ պատասխանեց . « Յայտնէ նմա
թէ Խրիմեան պատ է արդէն , Հայաստանի պատն
է : » Ժպտեցաւ իտալեանն , մեք ալ ժպտեցանք :

Կը մեկնիմք Պռինտիզիէն , եւ կը մտնեմք շո-
ղէկառքին մէջ , որ կը սուրայ անդնդհատ :

Զիւնապատ է Ապենինեան լեռնաշղթայն :

Չիւն կը ծածկէ ամեն բան : կը ճիւնէ առա-
տապէս, եւ կը սառիմք շողէկառքին մէջ :

14 ՄԱՐՏ .

Ի՛նչ տքնութիւն, եւ ի՛նչ տաժան ուղէւորում:
Հասանք Հռոմ, ուր կը ճիւնէ անդուլ : Ապաս-
տանեցանք մի պանդոկի մէջ, որ կը կոչուի Ալ-
պեռիօ Տի Լօնտա (Պանդոկ Լօնտօնի):

Շողէնաւ եւ շողէկառք ուժաթափ արած էին
'զիս . այլ որոշեցի դործել :

Հռոմի մէջ լսեցի թէ պաշտօնանկ եղած է
Պ. Տէբուէզիս, ում ուղղուած էին մեր պաշտօ-
նագիրներ, եւ թէ արտաքին նախարար ընտ-
րուած է Պ. Գօռզի, որ կոստանդնուպօլիսէն
եկած էր մեր շողէնաւով :

Շինել տուի այցաքարտներ Խրիմեանի եւ ինձ
համար, այնպէս որպէս հրահանգ արուած էր
մեզ : Հայ պատուիրակի այցաքարտն կը պարու-
նակէր սա բառեր. Մկրտիչ Խրիմեան, Առշրվեզ
Տարօն եւ Էֆս-Բաղդադի Տարօնի եւ նախկին
Պատրիարք օսմանեան Հայաստանի): Իւր թարգ-
մանի այցաքարտն կը պարունակէր սա բա-
ռեր . Միևսա Չերագ, Արգոնդեո աղաշե ա շա
Տեքիւդասիօն Առնկնիկն (Բարտուղար կցորդ
Հայ Պատուիրակներին): Ապա, երբ Պէրլին հա-
սանք, Խրիմեանի համար շինել տուի հետագայ
այցաքարտն . Լ' Առշրվեզ Մկրտիչ Խրիմեան,
Էֆս-Բաղդադի եւ Տեշեկե Տե զԱռնկնիկն Տր
Դիւնգի (Արքեպիսկոպոս Մկրտիչ Խրիմեան ,

Նախկին Պատրիարք եւ Պատուիրակ օսմանեան Հայաստանի) . այս յետին ախտոս արձանագրուեցաւ նաեւ Պէշիկթաշի արքեպիսկոպոս Խորէն Նար Պէյի այցաքարտին վրայ :

Ուղեւորական հաղուստներս ձգելէ եւ սլաշտօնական համազգեստ առնուլէ յետոյ , տեղեկացայ թէ ուր էր արտաքին սլաշտօնատունն եւ թէ ով էր ընդհանուր քարտուղարն : Երեկոյ էր արդէն , մեր պանդոկապետ խորհուրդ տուաւ ինձ հանգիստ առնուլ այսօր , առարկելով թէ ուշ էր եւ թէ սլաշտօնատունն փակուած էր հաւանապէս : Չ'ուղեցի անսալ մի խորհուրդի որ կորցունել պիտի տար մեզ մի ամբողջ օր . կառք հեծայ , եւ հասայ արտաքին սլաշտօնատունն :

Բիւզանդիանի մէջ , կեանքս երկու աստիճան միայն ունեցած էր . ուսանող եղած էի , սալա ուսուցիչ . տեսած էի դպրոցներ միայն , եւ ոչ մի սլաշտօնատուն նշմարած էի երբէք . դիւանագիտական ասպարէզն անձանօթ էր ինձ , որպէս աշխարհ անձանօթ էր Աղամի , երբ սա դրախտին մէջ էր դեռ : Ուստի , ոչ ոք պիտի զարմանայ լսելով թէ , երբ սլաշտօնատունի քարէ սանդուղներէն վեր ելայ , սիրտս տրոփեց ծոցիս մէջ եւ հոգիս յուզուեցաւ ակնածու զգացումներով :

Մի բարասլան դիմաւորեց 'զիս եւ առաջնորդեց դէպ մի ընդարձակ նախասենեակ , ուր յայտնեցի նմա թէ կ'ուղէի ներկայանալ ընդհանուր քարտուղար Կոմս Դօնիէլլիի :

« Կոմսն աստ է դեռ, պատասխանեց նա, այլ իսկոյն պիտի մեկնի, — Շատ լաւ, յարեցի. կը խնդրեմ որ այցաքարտս հաղորդուի նմա:» Բարասպանն տարաւ այցաքարտս, ուր դրած էի սատողեր. « Մի քրիստոնեայ պատուիրակութիւն եկած է Սրեւելքէն. նա կը յղէ 'դիս որպէս զի յանձնեմ Ձեզ Վսեմափայլ Պարոն արտաքին նախարարին ուղղուած պաշտօնագիրներ: »

Կոմս Դոռնիէլի, որ մի ազնիւ անձ թուեցաւ ինձ, բարասպանէն առաջնորդուած, ինձ մօտեցաւ իսկոյն, եւ, աջս սեղմելով, ասեց. « Ներեցէք ինձ, պարոն. ստիպուած եմ մեկնիլ այժմ իսկ, զի նախարարն 'դիս խնդրած է: Կը տեսնէք թէ ուշ է արդէն. սակայն, մի նոր նախարարի ընտրութիւնն կը պատճառէ միշտ ծանր դործեր, որովք զբաղեցայ ամբողջ օրն եւ որովք պիտի զբաղիմ այս դիշեր իսկ: Պիտի վերադառնամ երկու ժամէն, եւ յայնժամ կարող էք տեսնել 'դիս, թէ չ'էք ուղեր վաղի ձգել այս տեսակցութիւն: — Պարոն կոմս, պատասխանեցի, կը նախընտրեմ տեսակցիլ ձեզ հետ այս դիշեր, զի չ'եմ ուղեր կորցունել մի օր: Խնդիրն ստիպողական է, որպէս դուք իսկ պիտի դատէք երբ տեղեկանաք նմա: — Լաւ, պարոն, յարեց ընդհանուր քարտուղարն, երկու ժամէն. մնաք բարեաւ. հազար ներում: — Երթաք բարեաւ, պարոն կոմս: »

Որոշեցի սպասել նախասենեակին մէջ, յուսալով որ նա աւելի կանուխ վերադառնար, եւ սկսեցայ ձեմել անդ, չտիեւելով 'դայն հիւսիսէ

հարաւ : Պատին վրայ կը տարածուէր մի ընդար-
ձակ երկրաքարտ , որ կը ներկայացունէր իտա-
լիան , թերակղզին եւ կղզիներն : Յիշելով այդ
երկիրի նախորդ կացութիւնն , մտածեցի թէ ան-
հնար չ'է որ Հայաստան վեհագոյն վիճակ ստանայ
մի օր , եւ մի հայ ընդհանուր քարտուղար ասէ
մի իտալեան քարտուղարի . « Մեր նախարար
խնդրած է 'զիս , եւ սխտի մեկնիմ իսկոյն : Երեք
ժամէն եկէք , սպրոն , որպէս զի կարենաք
երեսս տեսնել : Մնաք բարեաւ , բիւր ներում »

Կը շարունակէի ման դալ եւ երազել , երբ
բացուեցաւ նախասենեակի դուռն : Կոմս Գու-
նիէլլի մօտեցաւ ինձ եւ ասեց . « Գիտեմ , սպրոն ,
ուշ մնացի , այլ ներում կը խնդրեմ . նախարարն
երկար հրահանգներ տուաւ ինձ , եւ չ'էի կարօզ
թողուլ 'զայն իսկոյն : » Ապա առաջնորդեց
'զիս դէս իւր սենեակ , ուր , իւր թիկնաթուռի
քով մի թիկնաթուռ ցոյց տալով , հրաւիրեց 'զիս
նստիլ . « Խօսեցէք , սպրոն , յարեց նա , յայտ-
նեցէք ձեր խնդիր . այժմ պատրաստ եմ լսել
ըզ ձեզ : »

Որպէս զի չը մերժուէր կամ չը յետաձգուէր
այն ունկնդրութիւն 'զոր սխտի խնդրէի Խրիմ-
եանի համար , հարկ համարեցի զօրաւոր կեր-
պով ներկայացունել խնդիրն ընդհանուր քար-
տուղարին : Երկու նամակ եւ մի յիշատակագիր
յանձնեցի նմա . նամակներէն մին արտաքին
նախարարին կը ներկայացունէր յիշատակագիրն ,
իբր հայ ազգի իղձ եւ սահանջ , եւ միւսն
Խրիմեանն , իբր հայ ազգի սպառուիրակ . ներ-

սէս վարժապետեան ստորագրած էր 'ղայնս :
Չը պիտի հրատարակեմ նամակներն, զի ձեւական
արժէք միայն ունին, եւ չը պիտի կարենամ
հրատարակել սերճախօս յիշատակագիրն , զի
գրուած է կարմիր մեջանով . . . : Ապա, սասէս
խօսեցայ Գօռնիէլի . « Հայաստանի Բարձրա-
շնորհ նախկին Պատրիարքն, գլուխ մի եկեղեցիի
որ 5,000,000 քրիստոնեայ կը վարէ Արեւելքի
մէջ, Հռոմ եկաւ այսօր, որպէս զի սլաւիւ ու-
նենայ վսեմափայլ պարոն արտաքին նախարա-
րին հաղորդել մի ներկայացուցիչ նամակ , 'զոր
տուած է Կոստանդնուպօլիսի Պատրիարքարանն,
եւ մի յիշատակագիր, որ Բարիզի դաշնագիրն
ստորագրող միւս պետական դահլիճներին ալ
պիտի հաղորդուի : Այս պաշտօնագիրներ պատ-
րաստուած են մարտ 3ին, երբ վսեմափայլ պա-
րոն Տէրուէլիա կը վարէր արտաքին նախարարի
պաշտօնն : Բարձրաշնորհ նախկին Պատրիարքն
սլաւիւ ունի աղաչել վսեմափայլ պարոն կոմս
Գօռնիի որ բարէհաճի շնորհել նմա մի ունկն-
դրութիւն ըստ կարի շուտ, զի պիտի մեկնի ան-
յապաղ որպէս զի կատարէ նոյն պաշտօնն միւս
եւրոպական դահլիճներին քով : »

Ընդհանուր քարտուղարն զգաց գործի կա-
րէւորութիւնն : « Հայաստանի Պատրիարքն
Հռոմի մէջ է արդէն, հարցաւ նա . ո՞ւր լըած է
արդեօք : — Արպեռիօ սի Լօնտա, թիւ 39, սլա-
տասխանեցի : Նա փափագած է Հռոմ գալ նախ
եւ ապա այցել միւս ոստաններն, վեհաժողովի
գումարումէն յառաջ : — կը տեսնեմ, պարոն,

Թէ խնդիրն ստիպողական է, պատասխանեց
Գոննիէլլի, եւ թէ ժամանակ չ'ունիք դեղերիւ
աստ: Կը խոստանամ ձեզ ջանալ որ ունկնդրու-
թիւնն շնորհուի ըստ կարի շուտ: — Շնորհակալ
եմ, պարոն կոմս, յարեցի. արդէն ձեր աղնիւ
համբաւ հասած է մինչեւ Արեւելք, եւ հայ
պատուիրակութիւնն կը յուսոյ թէ չը պիտի
զլանաք նմա ձեր աջակցութիւն: — Վստահ
եղէք, պարոն, պատասխանեց նա, թէ պիտի
ջանամ կատարել ձեր փափագ: Այժմ իսկ պիտի
երթամ նախարարին յանձնել ձեր պաշտօնա-
գիրներ եւ ունկնդրութիւն խնդրել Հայաստանի
Պատրիարքին համար: Անյապաղ պիտի ստանաք
հրաւիրագիրն: »

Կրկնելով շնորհակալիքս, հրաժեշտ տուի այս
ընտիր անձի, եւ մեկնեցայ պաշտօնատունէն:
Գիշեր էր արդէն, եւ Հռոմ վառած էր իւր բիւր
ճրագներ: Մեր պանդոկի դռնապանին պատ-
ուիրեցի որ, երբ մի նամակ գար ինձ համար,
իսկոյն յղէր ինձ 'զայն:

Հազիւ չորս ժամէ յետոյ, մի սպասաւոր, զար-
թեցունելով 'զիս, մի նամակ յանձնեց ինձ: Պա-
հարանն եւ նամակի առաջին էջն սեւ շրջանակ
ունէին, զի իտալիա իւր առաջին թագաւորի
սուգին մէջ էր դեռ: Պահարանի աջ անկիւնին մէջ
գրուած էր Preme (ստիպողական), եւ հասցէն էր

Al Signore

Signore Minasse Tchéraz

Roma


Hôtel de Londres, 59.

(Ա.Ռ. Պարոն
Պարոն Մինաս Չերազ

Հռոմ
Պանդոկ Լոնսոնի, 59.)

Պաշտօնագիրն կը պարունակէր հետագայ
բառերն .


MINISTERO
DEGLI
AFFARI ESTERI



Sua Eccellenza il Conte Corti, Ministro degli
affari esteri, riceverà Sua Santità il Capo della
Deputazione Armena, domani, Mercoledì, alle
2 ore pomeridiane .

Roma, Martedì, 26 Marzo 1878.

(ԱՐՏԱՔԻՆ
ՊԱՇՏՕՆԱՏՈՒՆ



Վսեմափայլ կոմս Գօռդի, արտաքին Նախա-
րարն, պիտի ընդունի Հայ Պատուիրակութիւնի
Բարձրաշնորհ Գլուխն, վաղ, Չորեքշաբթի, ժամ
2ին կէսօրէ յետոյ :

Հռոմ, Երեքշաբթի, 26 Մարտ 1878.)

Բնագիրն պահպանուած է իմ քով : կը փու-
թամ յաւելել թէ ամեն հետաքրքիր Հայ կարօղ
է, ինձ դիմելով, տեսնել այս պաշտօնագիր,
նաեւ այն յաւէտ կամ նուազ կարէւոր պաշտօ-

նագիրներ, 'զորս պիտի հրատարակեմ այսուհետեւ :

15 ՄԱՐՏ .

Այսօր, եւրոպական ժամ 2ին, պատիւ ունեցանք ներկայանալ նախարարին, որ ընդունեցաւ ըզմեզ արտաքին պաշտօնատունին մէջ : Խրխմեան կը կրէր այն համազգեստ 'զոր հայ եպիսկոպոսներն կը կրեն եկեղեցիէն դուրս, եւ ես դրած էի փես, իբր Տաճկաստանի քրիստոնեայ : Պանդոկէն մինչեւ պաշտօնատունն եւ պաշտօնատունէն մինչեւ պանդոկն, ժողովուրդն հետաքրքիր աչքերով կը դիտէր այն կառք որ կը տանէր հայ պատուիրակութիւնն : Պաշտօնատանի դռնասպաններն զինուորական ողջոյն կը տային եւ բոլոր պաշտօնեայներն, կանգ առնուելով, գլուխ կը ծռէին երբ կ'անցնէր Խրխմեան իւր թարգմանով :

Բարասպաններ առաջնորդեցին ըզմեզ դէպ արտաքին նախարարի սենեակն : Կոմս Գօռդի դիմաւորեց ըզմեզ, եւ ներկայացուցի նմա հայ պատուիրակն իւր տիտղոսներով : « Միթէ, հարցաւ նա, Բարձրաշնորհ Պատրիարքն չը գիտէ եւրոպական լեզուներ : — Ոչ, պարոն կոմս, պատասխանեցի, Բարձրաշնորհն արեւելեան լեզուներ միայն կը խօսի, եւ կ'աղաչեմ որ բարէհաճիք գործածել 'զիս իբր թարգման : »

Նախարարն հրաւիրեց ըզմեզ նստիլ մի ճոխ բազմոցի վրայ, եւ ինք ընտրեց մի թիկնաթոռ : « Ինձ կը թուի թէ, յարեց նա, ուղէկից էինք Կոստանդնուպօլիսէն մինչեւ Պոլիստիղի : — Այո,

պարուն կոմս, պատասխանեց Խրիմեան : Կը ցա-
ւիմ որ պատիւ չ'ունեցայ ներկայացուիլ Ձեզ
չողէնաւին մէջ : Աստ միայն լսեցի թէ արտաքին
նախարարութիւնն ստացած էք, եւ աստ կը
փութամ շնորհաւորել ըզ Ձեզ այս քարծր պաշ-
տօնի համար, հաւատալով որ այս ընտրութիւն
մեծապէս օգտակար պիտի լինի թէ իտալեան
ազգին եւ թէ քրիստոնեայ Արեւելքին : » Կոմս
Քօռզի շատ զոհ եղաւ այս համակիր զգացումէ,
եւ, շնորհակալիք յայտնելով Խրիմեանի, ուզեց
լսել թէ ինչ կը խնդրէր հայ պատուիրակու-
թիւնն : « Կարդացի արդէն այն պաշտօնագիր-
ներ որք երէկ յանձնուեցան ընդհանուր քար-
տուղարին : Հայերն վարչական ինքնօրինութիւն
կը պահանջեն, այլ եւրոպական թէ ասիական
Տաճկաստանի մէջ : — Ծշմարիտ է թէ Հայեր
կան Տաճկաստանի եւրոպական մասին մէջ, պա-
տասխանեց Խրիմեան, այլ ազգի մեծամասնու-
թիւնն ասիական մասին մէջ է, օսմանեան Հա-
յաստանի մէջ, ուր կը ցանկամք ունենալ վար-
չական ինքնօրինութիւն : — Շատ լաւ, յարեց
Քօռզի : Այժմ պատրաստ եմ լսել այն տեղե-
կութիւններ 'զորս պիտի տաք ձեր դատի նկատ-
մամբ : »

Մտածելով թէ նախարարն ժամանակ չ'էր
ունեցած կարդալ մեր պաշտօնագիրներ, որպէս
կը յայտնէր իւր հարց, հարկ համարեցինք ըն-
դարձակ տեղեկութիւններ տալ նմա : Խրիմեան
խօսեցաւ, եւ թարգմանեցի սասկէս .

« Պատիւ ունիմ թարգմանել Ձեզ, վսեմա-

փայլ կոմս , օսմանեան Հայաստանի՝ Բարձրա-
չնորհ նախկին Պատրիարքի խոհերն եւ խօսերն :

Եւրոպական Պետութիւններն որք Գրիմի դաշ-
տերին մէջ թափեցին իւրեանց ազնուագոյն ար-
իւն եւ ոյց մէջ նշանաւոր հանդիսացաւ նաեւ
Իտալիա, իւր մօտաւոր վերածնունով բարա-
խուն, Տաճկաստանն ներկայ վտանգէն ազա-
տելէ յետոյ, ուզեցին ասպագայ եւ անդերծ
վտանգներէ փրկել զայն, կարգադրելով ռայա-
ների վիճակն : Նոքա ներշնչեցին 1856ի այն
Խաղղը Հիւսնայուն որ կոչուած էր հաւասարա-
չափ ձուլել տիրապետ ցեղն եւ հսկատակ ցե-
ղերն : Գաղափարն ազնիւ էր, սյլ գործադրելի
է՛ր Տաճկաստանի մէջ :

Գործադրելի չէր, զի մի աշխարհական կա-
ռավարութիւն միայն կրնայ ասպահովել ազա-
տութիւնն եւ գործադրել հաւասարութիւնն :
Արդ, Ձեր վսեմութիւն քաջ զիտէ թէ թուրք
կառավարութիւնն աստուածալետական է, քանի
որ Սուլթանն Մարդարէի յաջորդն է եւ մահ-
մետական կրօնի բացարձակ զլուխն : Մահմե-
տական ոչ կարեւրն աւելի անողոք եւ աւելի
ահաւոր է քան պատական ոչ կարեւրն, զի
Պասն ալ աշխարհական իշխանութիւն չունի,
չնորհիւ այն ազատախօս շունչի որ բոցավառեց
իտալեան հայրենասէրներն, մինչ Սուլթանն
ունի մի աշխարհական իշխանութիւն որ անաս-
ման է եւ երկիրներ որք անհուն են :

Ուրեմն ձուլիչ դրութիւնն ճակատագրուած
էր ձախողիլ, եւրոպական Տաճկաստանի մէջ

որպէս նաեւ ասիական Տաճկաստանի մէջ : Չախողեցաւ նա, թէեւ Հայերն, չորս միլիոն անհատէ բաղկացած քրիստոնեայ ժողովուրդ, 'զոր սլաւիւ եւ սլաւոսն ունիմք ներկայացունել Եւրոպայի մէջ, չ'են նկրտած բնաւ խափան լինիլ նմա եւ մինչեւ իսկ չ'են զլացած նմա իւրեանց բարոյական եւ նիւթական աջակցութիւն, զի վատահ էին թէ Պետութիւններն իմաստուն եւ արդարակորով էին : Քրիստոնեայներն անխնայ հարստահարուեցան, որպէս երբեմն, Ռումէլի եւ Անադօլիի մէջ : Աստի ծագեցան այն ապստամբութիւններ որք վրդովեցին աշխարհի խաղաղութիւնն, Ռուսերն եւ Թուրքերն իրարի դէմ հանելով կատաղապէս :

Այս սլատերազմ սլիտի յանգի մի վեհաժողովի, ուր Բարիդի դաշնագիրն ստորագրող Պետութիւններն սլիտի դումարուին որպէս զի մի նոր լուծում տան արեւելեան խնդիրին : Արդ, վսեմաւիայլ կոմս, մեք կը համարձակիմք յայտարարել, յանուն Սուլթանի հպատակ երեք միլիոն Հայերին, թէ այդ լուծում կատարեալ եւ վերջնական չը սլիտի լինի, մինչեւ որ վեհաժողովի մասնակից Պետութիւններն չը նկատառեն օսմանեան Հայերի վիճակն, որք մի ընդարձակ քրիստոնեայ տարր կը ձեւացունեն :

Ճշմարիտ է, վսեմաւիայլ կոմս, թէ, Սան-Սդէֆանօի դաշնագիրի ժ.Չ յօդուածովն, թուրք կառավարութիւնն յանձն կ'առնու բարէնորոգել օսմանեան Հայաստանն : Այլ Չեր վսեմութիւն քաջ գիտէ թէ բարեկորոգուլն բառն բնաւ ար-

ժէք չ'ունի Տաճկաստանի մէջ, մի երկար փոր-
ճառութիւն ասպացուցած է թէ մի կեղծ դրամ
է դա : Հայերն չ'են կարող շատանալ մի այս-
պիսի եղջերուաքաղով : Նոքա կը ցանկան բախ-
տակից լինիլ եւրոպական Տաճկաստանի ռայա-
ներին, որք իւրեանց եղբայրներ են, եւ կը հա-
մարձակին եւրոպական ատեանին տուջեւ յայտ-
նել թէ ինչ իրաւունքով կը պահանջեն այս
լուծում :

Հայերն իրաւունք ունին այս լուծումի, զի,
սլաւ տարրէն յետոյ, չը կայ Տաճկաստանի մէջ
քրիստոնեայ ժողովուրդ որ աւելի բազմաթիւ
լինի քան հայ ժողովուրդն կամ հաւասարի նմա :
Նոքա իրաւունք ունին այս լուծումի, զի աւելի
չարչարուած են քան Տաճկաստանի միւս քրիս-
տոնեայ ցեղերն, ամենօրեայ հարստահարու-
թիւններ կրելով թուրք պաշտօնեայներէն եւ
քուրդ պաշտօնեայներէն, եւ զի այսուհետեւ
ալ աւելի պիտի չարչարուին, շնորհիւ Պուլկա-
րաստանի կոտորիչներին, որք, ռուս արշաւէն
խոյս տալով, Սսիա կը նետուին, իւրեանց սիր-
տի մէջ կրելով ատելութիւն խաչին դէմ եւ
վրէժխնդրութիւն քրիստոնեային դէմ : Նոքա
իրաւունք ունին այս լուծումի, զի, ռայաներին
մէջ, նոքա միայն կարող են օգտիլ ինքնավա-
րական եղանակի բարիքներէն, արդէն ունենա-
լով մի ազգային սահմանադրութիւն որ 20
ամերէ ի վեր կը գործադրուի եւ որ խարխա-
սունի ընդհանուր քուէարկումն : Նոքա վերջա-
պէս իրաւունք ունին այս լուծումի, զի արդի

Ասիաի ամենէն աւելի քաղաքակիրթ ժողովուրդն են: Չանց ասնուլով պատմել այն առաջդիմութիւններ 'զորս նոքա կատարած են գիտութիւնների եւ արուեստների մէջ, մեք պիտի ասեմք, որպէս զի Ձեր Վսեմութիւն մի գաղափար ստանայ այն մտաւոր մշակումի վրայ ում հասած են նոքա իւրեանց յատուկ ճիղերով եւ իւրեանց անխոնջ յարատեւումով, մեք պիտի ասեմք թէ, Հայերն կրնան կարողալ այսօր, իւրեանց ազգային բարբառի մէջ, հին աշխարհի գրէթէ բոլոր յոյն եւ լատին հեղինակներն, որպէս նաեւ անմահ գործերն այն հանճարների որք սրանձալի հանդիսացուցած են Իտալիան, Ալեմանիան, Ֆրանստան եւ Անգլիան: Որ ասիական ժողովուրդ կրնայ հայ ազգին հետ զուգակշիռ գալ այս նկատմամբ: Եւ, եւրոպական Տաճկաստանի մէջ իսկ, Պուլկարներն, Պօսնացիներն եւ Հէրզէկօվինեաններն կրնան պարծիլ թէ ունին մի մտաւոր մշակում որ այսքան զարգացուն լինի, թէեւ առնչակից են քաղաքակիրթ Եւրոպաի:

Ահա, Վսեմափայլ կոմս, այն արտղոսներ որովք Հայերն Եւրոպաի կը ներկայանան այսօր, մի հայ ինքնօրէն կազմակերպ պահանջելով օսմանեան Հայաստանի այն մասի համար որ չը պիտի միանայ Ռուսաստանի:

Հայերն պատիւ ունին զիմեւ այսօր մեծ եւ ազատ Իտալիաի, 'զոր կը սիրեն եւ կը մեծարեն, եւ կ'աղաչեն որ Ձեր Վսեմութիւն բարէհաճի շնորհել իւր վեհանճն աջակցութիւն որպէս զի

ստանան, մօտաւոր վեհաժողովին մէջ, մի վարչական ինքնօրինութիւն ում դերիչխան լինի Սուլթանն եւ պաշտօղան լինին եւրոպական Պետութիւններն :

Հայերն անեզր խանդ կը տածեն իտալիաի ազնիւ զաւակներին նկատմամբ : Գուք մի ցեղ էք որ նախատահմանուած է. դուք կոչուած էք վեհապետել աշխարհի, երբեմն ձեր զէնքերով, այսօր ձեր հանձարով : Գուք տէր եղած էք աշխարհի ձեր անյաղթ լէզէոններով, ձեր հրաշալի օրէններով, ձեր կրօնով, ձեր դեղարուեստներով եւ ձեր դեղատառներով : Չեղ ուրեմն կը դիմէ Հայաստան, մարդկային սեռի մայրհայրենիքն ըստ Աստուածաշունչի, եւ կ'ասէ ձեզ . Օգնեցե՛ք ինձ որպէս զի վերականգնիմ, եւ, որպէս քաղաքացիք իմ եւրոպական աշխարհին, գործածեցե՛ք 'զիս որպէս զի ասիական աշխարհին մեջ ծաւալե՛ք քիստնեայ եւրոպաի քաղաքացիութիւնն : »

Կոմս Գօնդի մտադիւր կ'ունկնդրէր այս ճառի, 'զոր ստէպ կ'ընդհատէր գլուխի նշաններով եւ կարճ նախադասութիւններով, որովք կ'արտայայտէր իւր հաւանութիւնն : « Եստ շնորհակալ եմ, պատասխանեց նա, այն համակիր զգացումներէ 'զորս հայ ժողովուրդն կը տածէ մեր ազգի նկատմամբ : Գոհ եմ այն բացատրութիւններէ որովք լուսաբանեցիք ձեր դատ : Դեռ երէկ դեպքան էի Տաճկաստանի մէջ, եւ կը խոստովանիմ թէ՛ ձեր գանդատներ չ'են անիրաւ : Որպէս յայտնեցի ձեզ, կարդացած եմ

ձեր յիշատակադիր եւ մեծ կարէւորութիւն կը տամ հայ ազգի դատին : Կը խոստանամ ձեզ պաշտպան կանգնիլ ձեր դատի, վեհաժողովին մէջ, թէ տեղի ունենայ, եւ ամեն առիթի մէջ, թէ վեհաժողով չը գումարուի : Գիտէք թէ ազգայնութիւնն մի սկիզբ է ում իտալիա կը պարտի իւր գոյութիւնն. ձեր դատ կը պատկանի այդ սկիզբի, ուստի ապահով եղէք թէ ոչ մի պետութիւն աւելի համակիր է նմա քան իտալիա : »

Խրիմեան փութաց յայտնել իւր շնորհակալիք, եւ յարեց թէ պատրաստ էր յիշատակադիրին վրայ նորանոր բացատրութիւններ տալ, երբ նախարարն հարկաւոր դատէր 'զայնս : « Հարկ չը կայ, պատասխանեց Գօռզի, զի յիշատակադիրն շատ պայծառ է : Կարդացի եւ ուսումնասիրեցի 'զայն արդէն, նորէն պիտի կարդամ 'զայն, եւ ապահով եղէք թէ լրջապէս պիտի զբաղիմ ձեր խնդիրով : »

« Մի յետին բառ ալ, պարոն կոմս, յարեցինք : Իտալիա կարօղ է ըմբռնել թէ որքան պիտի ծաղկի հայ ազգն, երբ ստանայ այն ընտիր եւ արդար վարչութիւն 'զոր կը պահանջէ այսօր, զի իտալեան փառապանծ դրօշին տակ կը պատսպարուի այժմ վենետիկի Մխիթարեան ձեմարանն, ոյր համբաւն ծանօթ է գիտուն աշխարհին եւ 'զոր Եւրոպա կը գնատէ արժանապէս : Ս, յդ վանքի նման հարիւրաւոր վանքեր կան օսմանեան Հայաստանի մէջ, ուր համախմբուած են հայ կրօնաւորներ, ցեղակից Ս. Դա-

զարի կրօնաւորներին . այլ անժխտելի է որ մեր վանքերէ ոչ մին կրցած է հաւասարիլ Վենետիկի հայ մենաստանին : Պատճառն է այն յոռի վարչութիւն որ կ'աւերէ Հայաստանն : Հայաստանի մենաստաններն կեղեքում եւ յարձակում կը կրեն անդուլ . Ձեր Վսեմութիւն քաջ դիտէ թէ մտաւոր մշակումն երկրորդական խնդիր է մի երկիրի մէջ ուր չը կայ ապահովութիւն : Տուէք մեզ վարչական ինքնօրինութիւն, եւ Հայաստան կը ծածկուի Ս. Ղազարի ձեմարանին պէս ձեմարաններով , որք եւրոպական քաղաքակրթութիւնն կը ծաւալեն ասիական աշխարհին մէջ : Մեզ կը թուի թէ Եւրոպա նխթապէս եւ բարոյապէս կը շահի երբ Ս.սիացին ունենայ այնպիսի պէտքեր 'զորս նա միայն պիտի կարենայ հոգալ : »

« Գիտեմ , պատասխանեց Գօռդի , թէ մի վանք կայ Վենետիկի մէջ որ սլաաիւ կը բերէ ձեր ազգի եւ մեր ազգի : Հայ ցեղի յատկութիւններն անձանօթ չ'են ինձ , որ դեսպան եղած եմ Ս.բեւեւքի մէջ : Ձեզ խոստացայ սրաչտականէլ ձեր դատ , եւ կրնաք ապահով լինիլ իմ վրայ : »

Խրիմեան յարեց . « Ենորհակալ եմ ի Ձէնջ , Պարօն կոմս : Հայ ազգն վստահ է Ձեր վրայ , զի իտալեան ժողովուրդին նկատմամբ համակիր զգացումներ կը տածէ երկար դարերէ ի վեր , մեր կիլիկեան թագաւորներէ ի վեր . այս հին համակրանք դրդեց 'զիս , Ս.բեւեւքի հրաժեշտ տալէ յետոյ , նախ Հռոմ դալ եւ ասլա այցել միւս եւրոպական օստաններն : »

Կոմս Գօռդի յայտնեց իւր գոհութիւն, եւ
Հայ պատուիրակութիւնն, ոտքի ելնելով, պատ-
րաստուեցաւ հրածեչտ տալ նմա :

« Ձեզ հրածեչտ տալէ յառաջ, յարեց Խրիս-
եան, սրբազան պարտ կը համարեմ ինձ սրտա-
գին իղձեր ուղղել դէպ երկին, մաղթելով որ
Իտալիայի նորստասակ թագաւորն իւր վեհ նա-
խորդի փառքին հաւասարի եւ նորընտիր նա-
խարարութիւնն կարենայ հզօրապէս աջակցիլ
մա, ազատութիւն եւ երջանկութիւն ծաւալե-
լով այս հոյակապ աշխարհի մէջ : »

Նախարարն, կանգուն եւ գլխիկոր, լսեց նախ-
կին պատրիարքի աղօթքն, եւ պատասխանեց .
« Նորընտիր նախարարութիւնն շատ շնորհակալ
պիտի լինի Բարձրաշնորհ պատրիարքի բարէ-
մաղթութիւններն իմանալով, եւ պիտի փու-
թամ վեհախառ թագաւորին հաղորդել այն
համակիր զգացումներ ' զորս Հայ պատուիրակու-
թիւնն կը աածէ արքունի դերդաստանին նկատ-
մամբ : »

Յայնժամ հրածեչտ առինք նախարարին :
Գօռդի աջ տուաւ մեզ եւ ընկերացաւ մինչեւ
պաշտօնատունի սանդուղն : Ենտրհակալ եղանք
քաղաքավար կոմսէն, եւ մեկնեցանք յուսալից :

Ապա փութացի յղել սա հեռագիր, որպէս
հրահանգ տրուած էր ինձ . Ա.Ռ. Պ. Ստեփան
Փափագեան, Հայ եկեղեցի Կաշաքա (Կոստան-
դնուպօլիս) : Ընտիր առողջութիւն : Մանրամաս-
նութիւններն նախախով : Վաղ պիտի մեկնիմ Բա-
րիզ : Լուր տուի ընտանիքիս : Միևսա :

Գրեցի նաեւ մի նամակ Բարձրաշնորհ Պատ-
րիարքին, որ ց'արդ պահպանուած է իւր քով :
Ա. յԴ նամակէ կը քաղեմ ներկայ տեղեկութիւն-
ներն :

16 ՄԱՐՏ .

Լ'Իդալի անուն Ֆաանսական օրագիրն , որ
Հռոմի մէջ կը հրատարակուի, կը յայտնէ այսօր
թէ Տ. Մկրտիչ Խրիսեան եւ Պ. Միկաւ Չերազ
Հոռն հասած են Տաճկաստանէ եւ իջած են
Լոնսօնի Պակդոկիսն մեջ : Ա. յս թերթ պահպան-
ուած է իմ քով :

Գնացինք տեսնել Պանթէոն անուն հոյակապ
եկեղեցին, որ մեհեան էր երբեմն : Ա. յցէն յե-
տոյ , մի խտալեան կրօնաւոր մօտեցաւ մեր
կառքի եւ ողորմութիւն ուղեց հայ կրօնաւորէն ,
խոստանալով յիշել 'զայն իւր պատարագի մէջ :
Խրիսեան առաւ նմա մի արծաթ դրամ . մու-
րացիկ կրօնաւորն յոյժ գոհ եղաւ եւ ուղեց
տեղեկանալ թէ ինչ ազգէ էր եւ ինչ աստիճան
ունէր իւր անձանօթ բարէրար : « Առնկնօ ետ
առչիվեագօւօ (Հայ եւ արքեպիսկոպոս) , պա-
տասխանեցի խտալերէն : — Արքեպիսկոպոս ,
յարեց նա հայերէն : » Ա. յս բառ , մի օտար
շուրթի վրայ , շատ ախորժ թուեցաւ մեզ , զի
անահնկալ էր : Ապա լսեցինք թէ Մխիթարեան
կրօնաւորներէն ուսած էր 'զայն , որք ստէպ կը
գային Հռոմ :

17 ՄԱՐՏ .

Ա. յցեցինք Ս. Ղուկասի նկարչական ճեմա-
րանն : Տեսուչն ինձ մօտեցաւ եւ յայտնեց թէ

ուսանողներն շատ հետաքրքիր էին լսել ընկեր-
րիս անունն , ազգութիւնն եւ կարգն , զի շատ
ախորժած էին իւր սլատկառելի կերպարանէ եւ
իւր վայելուչ համազգեստէ : Խրիմեանի այցա-
քարտն հազորդեցի նմա , որ շնորհակալ եղաւ :

Մեկնեցանք Հռովէն : Մտանք մի շոգէկառքի
մէջ , որ մինչեւ Բարիզ պիտի տանի ըզմեզ
սրարչաւ : — Ուղէկից է մեզ Պ. Պէյլիս , Պէր-
մինկամի գործարանասպետներէն մին , ընտիր հայր
որ կ'երագէ իւր զաւակներ : Խրիմեան օրհնու-
թիւն տուաւ նոցա համար , եւ ես մի քանի
շեպեպի , 'զորս մի բարէկամի անսալով առած
էի ծովախտին համար եւ 'զորս Պ. Պէյլիսի
ներկայացուցի իբր Տաճկաստանի միրգ : Բարի
կղզէցին , ում համեղ թուեցաւ այս պտուղ ,
հարցաւ թէ ինչ տեսակ ծառի վրայ կը բուսնի ,
եւ շատ զարմացաւ երբ լսեց թէ սիսեռի խորո-
ված է : Յայտնեցի նմա մեր սլաչտօն , եւ նկա-
րագրեցի ազգիս աղէտներն : Տխրեցաւ :

18 ՄԱՐՏ .

Դաշտն ծածկուած է ձիւնով , եւ լեռն սա-
ւով : կը ձիւնէ անդուլ :

Կ'անցնիմք Ալպեան լեռնաշղթայէն , որ ահեղ
հեղեղներ կը թաւալէ մեր առջեւ :

19 ՄԱՐՏ .

Յուրտ եւ աքնութիւն կը շարշարեն ըզմեզ :
Քառասուն ժամ շոգէկառքի մէջ . ինչ նահատա-
կութիւն :

Այսօր հասանք Բարիդ, գրէթէ հիւանդ :

Հայ պատուիրակութիւնն կատարեց անդ գործեր որք պիտի պատմուին յաջորդ գրուածիս մէջ, ոյր տխուրսն է ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՖՌԱՆՍԱ:




Ց Ա Ն Կ


ԶՕՆ	5
ՆԱԽԱԲԱՆ	5
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱ	25

1878

—————

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY





~~100-1000~~ 2

23544

23545

